



ԳԱՀԻՐԵՒ ՀԲԸՄ-Ը ԿԲ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ՈՒՍՏՈՂՆԵՐԸ



Կիրակի, 6 Դեկտեմբեր 2015-ին, Գահիրէ ՀԲԸՄ-ը հանդիսաւոր երեկոյթ մը կազմակերպեց, մեծարելու համար 2014-2015 ուսումնական տարեշրջանի Գահիրէի հայ համայնքի փայլուն շրջանաւարտները, անոնց յանձնելով գերազանցութեան վկայագրեր, նույնականացնելու և նիւթական պարգևներ:

Սոյն հանդիսութիւնը տեղի ունեցաւ Յելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսարահին մէջ, իոծ բազմութեան մը ներկայութեան, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մասցականեանի: Ներկայ էին նաեւ Գահիրէի Թեմական եւ Քաղաքական ժողովներու ատենապետները, Եգիպտոսի ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէ ՀԲԸՄ-ի ատենապետները, անդամներ, պարգեւատրուող ուսանողներու ծնողներ, բարեկամներ եւ յատկապես ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարիչ Մարմնի անդամներ՝ Տեարք Վազգեն Եագուպեան եւ Երուանդ Զօրեան, ինչպես նաեւ Եւրոպայի ՀԲԸՄ-ի Վարչութեան անդամուիի՝ Տիկին Աստղիկ Ալեքսանեան:

Երեկոյթը սկսաւ Գահիրէի ՀԲԸՄ-ի Վարչութեան ատենապետ՝ Տոք. Վիգեն Ճիզմենականի բացման խօսքով: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ինչպես նաեւ շնորհաւորեց ներկայ փայլուն ուսանողները եւ իրենց ծնողները՝ անոնց ձեռք բերած պատուաբեր արդիւնքներուն համար:

Ապա, ներկայացուց ՀԲԸՄ-ի Հայկական Յամացանցային Յամալսարանի (ՀՅՅ) հիմնադիր եւ նախագահ՝ Դոկտ. Երուանդ Զօրեանը, որ հիւրաբար քաղաքս կը գտնուեր եւ պատույ հիւրը եր օրուան հանդիսութեան:


Տոք. Երուանդ Զօրեան շատ առինքնող գեկուցում մը ցրաւ «Դաստիարակութիւն եւ Նորոյթներ» նիւթին շուրջ եւ մատնանշեց համացանցին եւ «Multimedia»-ին դերը, որպէս արդիական միջոց համայն աշխարհի մէջ ցրուած հայերը միացնելու, դաստիարակելու եւ պահպանելու հայկական ինքնութիւնը: Ան խօսեցաւ նաեւ ՀՅՅ-ի ընձեռած զանազան նախագծերու մասին, որոնցմով կարելի է, առցանց դասարաններու եւ Ելեկտրոնային գիրքերու միջոցով հայերն լեզու, հայոց պատմութիւն եւ մշակոյթ ուսուցանել:

Դոկտ. Երուանդ Զօրեան, որ նաեւ ատենապետն է ՀԲԸՄ-ի «Silicon Valley»-ի Մասնաճիւղին եւ անդամ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան, սոյն հաւաքոյթին առիթեն օգտուելով, դրուատեց Տիկին Աննա Տոլապեան-Թրայեանը, որ հաղորդակցութեան կապս է Գահիրէի ՀԲԸՄ-ին եւ ՀՅՅ-ին միշեւ, անոր շնորհելով «ՀՅՅ-ի Դեսպան» հմայիչ կոչումը, իր կատարած այն դերին համար որ ՀՅՅ-ի առցանց ուսման ծրագրերու ընդմեջեն, հայկական ինքնութեան մասին, լեզուի, պատմութեան, մշակոյթի եւ ճատրակի գիտելիքներ կը փո-

խանցե նորահաս սերունդին:

Պետք է նշել նաեւ թէ Տիկին Թրայեան՝ Գահիրեի ՀԲԸՍ-ի եւ ՀՀՀ-ի միջեւ որպէս հաղորդակցութեան կցորդ Նշանակուելին ի վեր, շուրջ երեք տարի առաջ, սոյն դասընթացքներուն մասնակցող եգիպտահայ Երիտասարդներուն թիւը զգալիօրեն աւելցած է: Դարձեալ, շնորհիւ իր խանդավառութեան եւ եռանդին, ան կարողացաւ տասը շրջանաւարտներու հետ կազմել ՀՀՀ-ի առաջին առցանց ճատրակի խմբական դասընթացքներ, ինչպէս նաեւ ճատրակի ակումբ մը՝ Գահիրեի ՀԲԸՍ-ի Կեդրոնին մէջ, ուր մասնակիցները շաբաթը անգամ մը կը հաւաքուին եւ կ'ըմբոշինեն իրենց նախասիրած մտային խաղը:

Հանդիսութեան առաջին բաժնի աւարտեն վերջ, սկսաւ փայլուն շրջանաւարտնե-



րու պարգևատրման արարողութիւնը: Մրցանակները, որոնք կը բաշխուին 2001 թուականին ի վեր, շնորհիւ Գահիրեի ՀԲԸՍ-ի Սաթենիկ Չագը Յիմնադրամին, գլահատանքի եւ քաջալերանքի արտայայտութիւն մըն են՝ հանդեպ համայնքին այն ուսանողներուն, որոնք փայլուն յաջողութեամբ աւարտած են իրենց կրթական շրջանը:

Այս տարի մրցանակի արժանացած են 17 շրջանաւարտներ.

Տասը՝ Նախակրթարանին.

Կլորիա Մկրտիչեան՝ 98.76% արդիւնքով,
Լարա Չամքերթենեան՝ 98.46%,
Կարօ Սարգսինեան՝ 98.15%,
Լուի Չիլինկիրեան՝ 97.63%,
Գարին Տրդատեան՝ 97.19%,
Արեգ Սիմոնեան՝ 96.95%,

Բիեր Զերտելեան՝ 96.56%,

Ոիթա Գեղրգեան՝ 95.3%,

Ալեն Բարմաքեան՝ 94.39%

Արին Սիմոնեան:

Երեք՝ Պատրաստականեն.

Վարդուհի Գրիգորեան՝ 94.66%,

Բերլա Աւանեան՝ 91.91%

Մեսրոպ Ղազելեան՝ 91.80%:

Երեք՝ Երկրորդականեն.

Սեւակ Սագյեան՝ 98.50%,

Փայլակ Թորոսեան՝ 93.50%

Կարին Կրպոյեան՝ 92%:

Այս տարի միայն մեկ ուսանող՝ Շակի Սարգիս, համալսարանաւարտ եղած է «Ծատ Լաւ» յիշատակութեամբ :

Պարգևները ուսանողներուն յանձնուեցան Գահիրեի ՀԲԸՍ-ի Վարչութեան անդամներուն կողմէ: Վկայագիրներու եւ գիր-



քերու առընթեր, փայլուն նիշերով շրջանաւարտները ստացան նաեւ նիւթական պարգևներ, որոնք կը համապատասխանեն իրենց ստացած վկայականին: Այսպէս, Նախակրթարանի բաժնեն շրջանաւարտը՝ 200 Ե.Օ.: Պարտաստականի բաժնեն շրջանաւարտը՝ 400 Ե.Օ., իսկ Երկրորդականինը՝ 1000 Ե.Օ.: Սոյն նիւթական պարգևները կը ստանան միայն անոնք՝ որոնց միջինը նուազագոյնը 90% է:

«Ծատ Լաւ» յիշատակութեամբ համալսարանաւարտը ստացաւ 1500 Ե.Օ.:

Կը շնորհաւորենք բոլոր շրջանաւարտները եւ անոնց կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

**ՀԲԸՍ-ի կայքէջն քաղեց՝
Անային ճիզմէնեան**